«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Դաստիարակ՝ Սահակյան Վարդիթեր

Մանկապարտեզ՝«Ազատանի Արփի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ 1

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների բազմակողմանի դաստիարակության նպատակն ու խնդիրները----------5

1.2 Էքսկուրսիաների կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները----------10

ԳԼՈՒԽ 2

2.1 Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում-------14

2.2 Էքսկուրսիաների և մշակութային այցերի իմ մասնավոր փորձի նկարագրությունը-15

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ----------21

ԿԱՊԸ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԵՏ ----------21

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ----------22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ----------26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական մանկավարժությունը գիտություն է նախադպրոցական տարիքի երեխաների բազմակողմանի դաստիարակության վերաբերյալ: Դաստիարակության հիմնական խնդիրը աճող սերնդին գիտելիքների, կարողությունների, հասարակության մեջ ընդունված կանոնների հաղորդումն է: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են այն մասին, որ ճիշտ ձևով իրականացվող նախադպրոցական դաստիարակությունը երեխաների հետագա ֆիզիկական և հոգեկան զարգացման համար ունենում է վճռական նշանակություն:

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք կատարելու կարևոր պայմանը համարվում է հիմնախնդրի պարզումը: Հիմնախնդիրը գիտական հարց է, որը լուծելու համար հասունացել են օբյեկտիվ պատճառներ: Առաջ քաշելով հիմնախնդիրը հետազոտողը հաստատում է. 1.տվյալ պահին առա ոչ բավարար գիտելիքների մակարդակը, որը պայմանավորված է նոր փաստերի և կապերի բացահայտման անհրաժեշտությամբ, 2.հասարակության նոր պահանջների առկայությունը, որն արտահայտվում է առկա գիտելիքների սահմաններից դուրս գալու և նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ: Մեր կողմից հետազոտական աշխատանքի համար որպես հիմնախնդիր դիտարկվելու է սաների հոգևոր և մշակութային դաստիարակության արդյունավետ իրականացման դժվարությունները:

Հետազոտության նպատակը որոշումը բխում է հիմնախնդրից: Այսինքն հիմնախնդրի լուծումը ինքնին հանդիսանում է հետազոտության նպատակը: Հետազոտական գործունեությունն իրականանում է այն ժամանակ, երբ նպատակաուղղված է և դրդապատճառներով հիմնավորված: Ըստ էության նպատակը իր մեջ արտացոլում է հետազոտության մտահղացումը: Միաժամանակ պետք է նկատենք, որ նպատակի որոշման օգնությամբ միաժամանակհետազոտողը պարզում է հետազոտական աշխատանքի իրականացման հիմնական ուղղությունները, դառնալով հետազոտության վերջնական արդյունքը հետազոտողի գիտակցության մեջ: Ըստ այդմ մեր կողմից, որպես հետազոտության նպատակ ընտրվել է էքսկուրսիաների և մշակութային այցերի օգնությամբ սաների հոգևոր և մշակութային դաստիարակության իրականացումը:Մենք գտնում ենք, որ էքսկուրսիաները և մշակութային օջախներ այցելություն կատարելը ապահովելու է երեխաների բազմակողմանի դաստիարակությունը, զարգացնելով

նրանց միտքը, ձևավորելով սեր բնության, բարու, ազնիվի, գեղեցիկի նկատմամբ, դասիարակելով նրանց մեջ հոգևոր արժեքներ:

Հետազոտության խնդիրները. Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով կարելի է նախադպրոցական ուսումնական հաստատությանսաներին ծանոթացնել բնությանը, հոգևոր և մշակութային արժեքներին:

Հետազոտության արդիականությունը - արդիական հետազոտությունները դիտարկում են այն հարցերը, որոնք առավել սուր հնչեղություն ունեն տվյալ ժամանակաշրջանում և ըստ այդմ պահանջում են հրատապ լուծում: Մեր ներկայացրած հիմնախնդիրը արդիական է, քանի որ նրա ուսումնասիրման և վերլուծության կարևորությունը արտահայտվում է մարդկային կյանքի բոլոր ոլորտներում: 21-րդ դարի ուսումնական հաստատությունները պահանջում են նոր մեթոդների, մոտեցումների, երեխաների գործունեության կազմակերպման արդյունավետ ձևերի կիրառում: Ըստ այդմ մեր կողմից որպես այդպիսի ձևեր ընտրվել են էքսկուրսիաները, հոգևոր ու մշակութային օջախներ այցելելը, որոնք նպաստելու են նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրական, հոգևոր, բարոյական դաստիարակության արդյունավետ իրականացմանը:

Ակընկալվող վերջնարդյունքները - զարգացնել երեխաների ուշադրությունը, մտածողությունը, կամային հատկանիշները, հոգեկան գործընթացների ձևավորումը, գեղագիտական ճաշակը, նպաստել բնության, բնական երևույթների վերաբերյալ նախնական պատկերացումների առաջացմանը, ընդլայնել բառապաշարը:

ԳԼՈՒԽ 1

1.1ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Այն ամբողջական գործընթաց է, որն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը՝ նրա նախասիրություններին, ունակություններին, կարողություններին, անհատական, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան: Նախադպրոցական ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում երեխայի բնականոն զարգացման համար, ինչն էլ հիմք է հանդիսանում, որ դեպի դպրոց երեխայի անցումը լինի սահուն և հեշտ:

Նախադպրոցական տարիքը մարդու ողջ կյանքի կարևորագույն ժամանակաշրջաններից մեկն է: ՈՒստի անհրաժեշտ է, որ դաստիարակները և ծնողները ճիշտ իրականացնեն երեխաների զարգացման ու դաստիարակության գործընթացը :

Զարգացումը մարդու ֆիզիզկակական, հոգեկան, սոցիալական հասունացումն է: Այն իր մեջ ներառում է ժառանգական և ձեռքբերովի հատկությունների քանակական ու որակական առանձնահատկությունները: Խոսելով ֆիզիկական զարգացման մասին, պետք է նշել, որ այն կապված է հասակի, քաշի, փոփոխությունների, մկանային ուժի ավելացման, զգայական օրգանների կատարելագործման, շարժումների կոորդինացման և այլնի հետ: Անդրադառնալով հոգեկան զարգացմանը, նկատենք, որ այս դեպքում տեղի են ունենում էական փոփոխություններ երեխայի իմացական, հուզակամային, հոգեկան գործընթացներում: Երեխայի սոցիալական զարգացումը իրականացվում է նրան հասարակական կյանքի մեջ ներառման ճանապարհով: Ներկայացնելով դաստիարակության գործընթացը, տեղին է փաստել, որ այն նպատակաուղղված և բազմակողմանի գործընթաց է: Վերջինը ապահովելու է մարդու վարքը հասարակության մեջ ընդունված կանոններին համաձայն: Նախադպրոցական տարիքի երեխաների բազմակողմանի դաստիարակության տակ հասկացվում է մտավոր,

ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, բնապահպանական (էկոլոգիական) դաստիարակության միասնությունը:Այս տարիքի երեխաների դաստիարակության նպատակը որոշվում է դաստիարակության ընդհանուր նպատակով՝հաշվի առնելով նախադպրոցականների տարիքային զարգացման առանձնահատկությունները:

Մտավոր դաստիարակության օգնությամբ ապահովվում է այս տարիքի երեխաների մտավոր կարողությունների, իմացական գործընթացների ձևավորումը: Երեխաների մտավոր դաստիարակության խնդիրները բազմազան են, դրանց շարքում կարելի է առանձնացնել շրջապատող կյանքի պարզագույն երևույթների մասին պատկերացումների ձևավորումը, հոգեկան գործընթացների՝ զգայությունների, ընկալումների, հիշողության, երևակայության, մտածողության, խոսքի զարգացման, հետաքրքրասիրության, մտավոր ընդունակությունների, ինտելեկտուալ կարողությունների և հմտությունների զարգացումը:Մտավոր դաստիարակությունը իրականացվում է մանկական գործունեության տարբեր ձևերում (ուսուցում, ծանոթացում շրջապատի հետ՝ էքսկուրսիա, խաղ, աշխատանք), բայց առաջատար դերը պատկանում է ուսուցմանը: Վերջինը իր բնույթով լինելով համակարգված և պլանավորված, ապահովում է երեխաների սկզբնական գիտելիքների ու կարողությունների կուտակման աստիճականությունը և կայունությունը:

Մանկապարտեզում ուսուցման հիմնական ձևը պարապմունքն է, որի ժամանակ երեխաներըկատարում են տարաբնույթ հանձնարարություններ(նկարել, ծեփել, պատմել նկարի բովանդակությունը և այլն), սովորում են լսել, կիրառել դաստիարակի ցուցումները: Դաստիարակությունը առավել արդյունավետ է, երբ երեխան ակտիվորեն մասնակցում է պարապմունքներին, խաղերին, հասկանում իրեն առաջադրված հանձնարարությունները: Յուրաքանչյուր պարապմունքի նյութը, բովանդակությունը ընտրելիս դաստիարակը առանձնացնում է այն դաստիարակչական խնդիրները, որոնք պետք է լուծվեն այդ ընթացքում: Այսինքն ուսուցման խնդիրը միայն գիտելիքների հաղորդումը չէ, այլ դրանց օգնությամբ կյանքի, շրջապատի, մարդկանց աշխատանքի նկատմամբ ճիշտ վերաբերմունքի ձևավորումը: Վերջինը շեշտադրում է ուսուցման ու դաստիարակության միասնության փաստը:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների շնորհիվ երեխան յուրացնում է հասարակության փորձը, ծանոթանում է մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր մշակույթի հետ:

Ֆիզիկական դաստիարակության կարևորագույն խնդիրն է երեխայի շարժողական ունակությունների, կարողությունների և ֆիզիկական որակների ձևավորումը: Տարբեր ակտիվությամբ շարժողական գործունեությունը բարելավում էերեխայի նյարդահոգեկան վիճակը, ապահովում նորմալ զարգացումը, նպաստում ոսկրամկանային համակարգի ամրապնդմանը, երեխայի մոտ առաջ է բերում աշխուժության զգացում, օգնում է հարմարվելու արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններին:: Ի.Պ. Պավլովը նշում է.«ֆիզիկական գործունեությամբ կարելի է լիցքավորել ու ամրապնդել գլխուղեղի կեղևը, բարձրացնել նյարդային գործունեության ակտիվությունը: Թարմության, առույգության և բավարարվածության զգացումը, որ ունենում է մարդը մկանային աշխատանք կատարելիս կարելի է համարել մկանային բերկրանք»[1]:

Բարոյական դաստիարակության հիմնական խնդիրներն են երեխաների բարոյական հատկությունների, դրական սովորությունների ու հմտությունների, բարոյական պատկերացումների և վարքի դրդապատճառների ձևավորումը: Դաստիարակի կողմից կազմակերպված գործունեության՝ պարապմունքների ընթացքում երեխաները հնարավորություն են ստանում հասկանալու գեղարվեստական գրականության, նկարներում, ընդհանուր կանոններում ընդհանրացված բարոյական փորձը: Մանկական գեղարվեստական գիրքը և արվեստը վառ, կենդանի կերպարներով ներազդում են երեխայի զգացմունքների վրա, ցույց են տալիս լավն ու վատը, սեր են առաջացնում բարու և ատելություն՝ չարի նկատմամբ: Ըստ այդմ երեխան կարողանում է կատարել ընդհանրացումներ, որոնք օգնում են կոնկրետ դեպքերում բարոյապես գործելու: Բարոյական դաստիարակության համար կարևոր է ոչ միայն գործունեության բովանդակությունը, այլև նրա կազմակերպումը: Խաղերը, պարապմունքները, շփվելու ձգտումը, ընկերական փոխհարաբերություններն օգնության գալու, ուշադիր լինելու ցանկություն պետք է առաջացնեն:

---

[1]Ալեքսանդրյան Է.Ա.Այվազյան Լ.Մ. Խաչատրյան Հ.Վ. և ուրիշներՆախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, «Մանկավարժ» հրատ. Երևան-1992թ., էջ271

Գեղագիտական դաստիարակության ամենահզոր միջոցը բնությունն է, որն իր բազմազանությամբ առաջացնում է գեղագիտական ապրումներ: Դաստիարակը սովորոցենում է երեխաներին նկարել, տեսնել բնության երևույթները, երեխաների ուշադրությունը դարձնել գույնի, հոտի, ձևի վրա, սովորեցնում է տարբերել բույսերը, ծաղիկները: Զևավորելով գեղեցիկի զգացմունքը բնության միջոցով՝դաստիարակը միևնույն ժամանակ զարգացնում է երեխաների դիտունակությունը, սովորեցնում տեսնել գույների փոփոխությունները տարվա եղանակների հերթափոխման ժամանակ, ձևավորում է նրանց մոտ տպավորությունները, համեմատություն կատարելու կարողությունները:

Կապված վերոհիշյալի հետ կարևոր նշանակություն ունեն էքսկուրսիաները, որոնց ճիշտ կազմակերպումը և անցկացումը նպաստում է երեխաների մտահորիզոնի ընդլայնմանը, գիտելիքների կուտակմանն ու հարստացմանը: Երեխաները սովորում են տեսնել , հասկանալ բնության երևույթները:

Մեծէ նաև մշակութային կենտրոնների, այդ թվում նաև թանգարանների, պատկերասրահների, մանկական ներկայացումների ու ֆիլմերի դերը, որոնք, ինչպես գիտակրթական, այնպես էլ մշակութային կենտրոններ լինելով, ունակ են լուծելու անձի զարգացման և կրթության հետ առնչվող ամենաբազմազան խնդիրներ: Ազգային արվեստի ու մշակույթի ցուցանմուշները, պատմական հուշարձանները, եկեղեցիները բացառիկ հնարավորություն ունեն միաժամանակ ազդելու մարդու մտավոր, կամային և հուզական ոլորտների վրա:

Սենսորային դաստիարակությունը երեխաների մտավոր, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակության հիմքն է կազմում: Հիմքընդունելովայն, որ օբյեկտիվ իրական աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, նախադպրոցականի ուսուցման ու զարգացման պրոցեսում մեծ տեղ է տրվում զննականությունը: Զննական ընկալումը հեշտացնում է սաների գիտելիքների յուրացման պրոցեսը: Դրանց զարգացածության աստիճանից է կախված շրջապատող իրականության ըմբռնման լիարժեքությունը և խորությունը: Դա է պատճառը, որ մանկապարտեզում մեծ ուշադրություն է դարձվում զգայական (սենսորային) դաստիարակությանը: Շրջապատող իրականությունից ստացված զգայական

տպավորությունների հարստությունն ու բազմազանությունը անհրաժեշտ պայման են մարդու հուզական վիճակի, գլխուղեղի կեղևի օպտիմալ գործունեության համար:

Սենսորային դաստիարակության հարուստ աղբյուրը՝ բնությունն է: Այստեղ երեխան ստանում է բազմաթիվ տպավորություններ: Նրան շրջապատում են գույներ, հնչյուններ, բուրմունք: Նման հնարավորություն են տալիս բնության գրկում կատավող էքսկուրսիաները, որոնց ընթացքում դաստիարակը սովորեցնում է երեխաներին զգալ, լսել, հիանալ, տեսնել (աշնանային խշխշացող տերևները, առվակի երգը, ծառերի երկար, մուգ ստվերները): Բազմազան են այս դեպքում զգայարաններին հասնող ազդանշանները, որոնց ընկալումն ու տարբերակումը հարստացնում և խորացնում է երեխաների զգայական փորձը:

Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. «Ուսուցման մեջ առաջինը և կարևորը դիտողականությունն է, երեխայի առաջին դիտողականությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է ներքին աշխարհը, ինչ-որ չի անցնում զգայարաններով, նա առհասարակ չի մտնում հոգու մեջ, ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երևան գա գաղափարը, իսկ հետո՝ բառը: Միայն այդպես կարելի է դիտողականությամբ մշակել լեզուն, իսկ լեզվով՝ հոգին ու միտքը»[2]:

Հոգևոր դաստիարակություն Գաղտնիք չէ, որ հոգևոր դաստիարակությունը կրթական գործունեության անբաժան, և կարևոր մասն է: Այդ գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունեն պետական, ազգային և եկեղեցական տոներին, հիշատակի օրերին, զոհված ազատամարտիկների, նշանավոր գործիչների հոբելյարներին նվիրված միջոցառումները, էքսկուրսաիները: Այսպես սաներն ավելի են մոտենում իրենց արմատների, ծանոթանում մեր հերոսների սխրանքներին, իրենց աչքով տեսնում են մեր հազարամյա վանքերն ու կոթողները: «Անկախ տարիքից՝ հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ»[3]:

---

[2]Ա. Տեր-Գրիգորյան ,Գործնականաշխատանքներըբացատրականընթերցանությանդասերին, Երևան , 1963:

[3]Յու. Ամիրջանյան, «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 348:

1.2 Էքսկուրսիաների կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կրթության ու դաստիարակության կազմակերպման ձևերի և մեթոդների շարքում իր ուրույն տեղն ունի էքսկուրսիան: ՈՒսուցման այս հետաքրքիր ձևի անվանումը գալիս է «excursion»-բառից, որը թարգմանաբար նշանակում է արշավանք:Էքսկուրսիան կրթական կամ ժամանցային նպատակով կազմակերպված կոլեկտիվ ուղևորություն է զբոսանք, շրջագայություն է դեպի բնություն, արդյունաբերական կառույցները, հոգևոր և մշակությաին օջախները:

Նախադպրոցական կրթության մեջ էքսկուրսիաները, նպատակային զբոսանքները, թեմատիկ, մշակութային այցերը զարգացնող, դաստիարակող նշանակություն ունեն: Դրանց հիմնական նպատակը նախադպրոցականների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը:
Նման միջոցառումները բավականին նպաստավոր է անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո:

Էքսկուրսիայի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այս ընթացքում ներդաշնակ կարելի է համադրել բացատրությունը ցուցադրության հետ: Այս բաղադրիչներից որևէ մեկի բացակայությունը կարող է նվազեցնել էքսկուրսիայի արդյունավետությունը: Այսպես օրինակ ցուցադրության բացակայության դեպքում այն վերածվում է սովորական զրույցի, իսկ եթե չլինի բացատրությունը, այն կդառնա պարզապես այցելություն տեսարժան վայր: Էքսկուրսիաները որպես կրթության և դաստիարակության կազմակերպման ձև կիրառելը նպատակահարմար է նաև այն առումով, որ տեղի է ունենում գիտելիքի աշխույժ և հետաքրքիր նփոխանցում և գիտելիքի յուրացումն է դառնում է ավելի կայուն ու խորը: Այն ինչ տեսնում է երեխան, տպավորվում է նրա գիտակցության մեջ դաստիարակի մեկնաբանության, բացատրության,, որոշակի իրադրությունների, երևույթների, փաստերի շնորհիվ: Դասիարակը ցուցադրելով միաժամանակ սովորեցնում է ճիշտ ընկալել տեսածը: Այսպիսով էքսկուրսիաները օգնում են ն/դ տարիքի սաներին պատկերացում կազմել

շրջապատող աշխարհի մասին վերացականը ակնառու-պատկերավոր դարձնելու , որոշակի իրադարձությանը մասնակից դառնալու միջոցով:

Աշխարհի վերաբերյալ երեխայի պատկերացումները ձևավորվում են զբոսանքների, էքսկուրսիաների, անկենդան բնության երևույթների, բույսերի, կենդանիների, աճը և զարգացումը դիտելու ընթացքում:Պետք է համաձայնվել, որ էքսկուրսիաները, այդ թվում զբոսանքների կազմակերպումը նաև մեծ նշանակություն ունեն ֆիզիկական զարգացման և օրգանիզմի կոփման համար: Զբոսանքների ժամանակ երեխաները շարժվում են, խաղում, որի արդյունքում ուժեղանում է նրանց նյութափոխանակությունը, արյան շրջանառությունը, գազափոխանակությունը:

Անդարդառնալով էքսկուրսիաների կառուցվածքին, բովանդակությանը և կազմակերպման ձևերին, պետք է նշենք, որ էքսկուրսիաների բովանդակությունը պետք է համապատասխանի երեխաների տարիքային զարգացման առանձնահատկություններին և հետաքրքրություններին: Ըստ այդմ յուրաքանչյուր տարիքային խմբի բնորոշ է ինչպես էքսկուրսիայի վայրի, այնպես էլ դրա կազմակերպման առանձանահատկությունը: Խոսելով էքսկուրսիայի կազմակերպման մասին, նշենք, որ նրա հաջողությունը կախված է դաստիարակի մասնագիտական կարողություններից և պատրաստվածությունից:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էքսկուրսիան իր բնույթվ աշխույժ էև հուզիչ, դաստիարակը պետք է սաների հետ շփվի անմիջական, պարզ ոճով, որպեսզի երեխաները զգան ավելի ազատ, անկաշկանդ և գիտելիքներ ձեռք բերեն առանց նույնիսկդա գիտակցելու, բնական ճանաչողության միջոցով: Հետաքրքրասեր երեխան շրջապատող աշխարհի նկատմամբ ցուցաբերում է ակտիվ հետաքրքրություն, ձգտում է ամեն ինչ տեսնել, ձեռք տալ, շարժման մեջ դնել: Նա շատ հարցասեր է և հետևաբար կազմակերպելով պայմաններ դիտումներ անցկացնելու համար՝ դաստիարակը պատասխանում է երեխայի հարցերին:

Պետք է համաձայնվել այն մտքի հետ, որ էքսկուրսիայի կազմակերպումը համեմատած ավանդական պարապմունքի հետ ավելի բարդ և պատասխանատու է, այն ներառում է մի շարք պայմանների ապահովում, այդ թվում.

- Էքսկուրսիայի ընթացքում մանկապարտեզի դաստիարակը կիառում է հատուկ տեխնիկա և մեթոդներ: Դաստիարակը նախօրոք մտածում է

էքսկուրսիայի բոլոր հնարավոր պահերի մասին, որոշում է իր հետ վերցնել օգնական (դայակ, մեթոդիստ, ծնող):

- Պետք է հաշվի առնել, որ ընտրած ուղին դեպի դիտարկման օբյեկտ չպետք է լինի հոգնեցուցիչ: Այն պետք է լինի 2-5 կմ կախված երեխաների տարիքից , ֆզիկակակն հնարավորությունից
- Դեպի ընտրված վայր ճանապարհորդության տևողությունը (միակողմանի)միջին խմբում չպետք է գերազանցի 30 րոպե միջին և 40-50րոպե ավագ խմբում: Իհարկե պետք է հաշվի առնել եղանակային պայմանները և ճանապարհի առանձնահատկությունները:
- Էքսկուրսիային մասնակցող երեխաների թիվը նույնպես կախված է տարիքից. Որքան փոքր են երեխաները, այնքան քիչ պետք է լինի նրանց թվաքանակը խմբում:
- Եթե էքսկուրսիան ենթադրում է տրանսպորտային ճանապարհորդություն, ապա դաստիարակը և ն/դ ղեկավարությունը պետք է նախապես պատրաստեն համապատասխան փաստաթղթերը(պատվեր, անվտանգության ճեպազրույց, նախադպրոցականների ցուցակ և այլն), իսկ եթե որևէ արտադրամաս, կազմակերպություն կամ հաստատություն են այցելելու, ապա պետք է համապատասխան նախնական պայմանավորվածություն ձեռք բերեն և ստանան թույլտվություն:

Անդրադառնալով էքսկուրսիայի իրականացման մեթոդներին, պետք է նշել, որ դրանք նույնպես պետք է համապատասխանեն որոշակի պահանջների, այդ թվում.

- Բովանդակության համապատասխանությունը երեխաների պահանջներին
- Նյութի հաղորդման մեջ կատակի, հումորի համատեղում
- Հարց-պատասխանի կիրառում
- Պետք է տարբերվեն ավանդաան պարապմունքի ձևից
- Խոսքի այն ձևերի, որոնք կիրառվելու են նախապես մշակում, այդ թվում. Բանաստեղծությունների, ասացվածքների, հանելուկների խաղերի անցկացման պլանավորում
- Էքսկուրսիայից հետո նկարների դիտում, զրույցի վարում, դիդակտիկ խաղի անցկացում, տպավորությունների արտահայտում նկարի միջոցով

- Էքսկուրսիաների քանակի պլանավորում, հիմնավորում:

Հաշվի առնելով, որ յուրաքնաչյուր էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ դաստիարակը իր առջև որոշակի նպատակ է դնում, հետևաբար դրա հետ կապված նա պետք է նաև առաջադրի և լուշի որոշակի ուսումնական, դաստիարակող և զարգացնող խնդիրներ: Ըստ այդմ նա նախապես որոշումէ էքսկուրսիայի կառուցվածքը , ելնելով ծրագրի պահանջներից և շրջակա միջավայրի առանձնահատկություններից: Չնայած տարբեր էքսկուրսիաների կառուցվածքը տարբեր է, բայց կան նաև ընդհանոր բաղադրիչներ, որոնք սխեմատիկ ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կառուցվածքվ.

- Ներածական զրույց
- Խմբային դիտարկում
- Երեխաների ինքնագործունեության խթանում
- Նյութերի հավաքագրում
- Մանկական խաղերի կազմակերպում հավաքած նյութերի օգնությամբ
- Եզրափակում:

ԳԼՈՒԽ 2.

2.1 Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Ներկայացնելով էքսկուրսիաների կառուցվածքը, կազմակերպման ձևերը, մեթոդները, պետք է նաև ընդգծենք, որ էքսկուրսիաները ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովում են ուսուցման, զարգացման ու դաստիարակության փոխադարձ կապը: Կապված վերոհիշյալի հետ առանձին-առանձին դիտարկենք կրթական գործընթացի նշված բաղադրիչները.

Խոսելով **ուսուցման** բաղադրիչի մասին, պետք է նկատենք, որ էքսկուրսիաների միջոցով ապահովվում է երեխաների աշարհընկալումը, քանի որ նրանց կողմից կատարվում է այնպիսի առարկաների և երևույթների դիտում և ճանաչում, ինչպիսիք հնարավոր չէ բերել մանկապարտեզ: Ընդունելով երեխաների աշխարհընկալման զարգացման հույժ կարևորությունը, պետք է նաև ընդունել, որ էքսկուրսիաների բացառիկ նշանակությունը չի սահմանափակվում միայն դրանով, այն նպաստում է նաև երեխաների խոսքի զարգացմանը: Ռուս մեծ մանկավարժ ՈՒշինսկին գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի[][4]:

Անդրադառնալով կրթության հաջորդ բաղադրիչնին՝ **զարգացմանը,** նշենք, որ էքսկուրսիաները նպաստում են երեխաների մտածողության զարգացմանը, քանի որ խթանում են նրանց վերլուծելու, ընդհանրացնելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողությունները, ակտիվացնում են նրանց ուշադրությունը, դիտողականությունը, հիշողությունը, ստեղծագործական երևակայությունը, գեղագիտական ճաշակը: Այդ առումով հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանը գրել է. «Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է: Այդ ուսուցիչն ամենահեշտ ու դյուրին ձևով խոր ու կայուն կերպով սովորեցնում է ճանաչել բնությունը»[][5]:

---

[4]Ушинский-«Собрание сочинений»(1948г. Стр.333)

[5]Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան2014թ.

Ներկայացնելով կրթության մյուս բաղադրիչը՝ դաստիարակումը, տեղին է նշել, որ էքսկուրսիաները նպաստում են երեխաների բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակությանը, ձևավորում նրանց մոտ գիտակցական կարգապահություն, հասարակական վայրերում վարքի ադեկվատ դրսևորում:

2.2 Էքսկուրսիաների և մշակութային այցերի իմ մասնավոր փորձի նկարագրությունը

Մեր կողմից իրականացվեց էքսկուրսիա դեպի քաղաքային կենտրոնական զբոսայգի, որի ընթացքում երեխաները մեծ խանդավառությամբ զբոսնեցին, հավաքեցին գույնզգույն տերևներ, դիդակտիկ խաղեր խաղացին: Այնուհետև հենց զբոսայգում կազմակերպվեց դիդակտիկ ինտեգրված պարապմունքի անցկացում: Պարապմունքը նախօրոք պլանավորված է դաստիարակի կողմից, ձևավորված են նրա թեման, նպատակը, քայլերը՝ խնդիրները և վերջնարդյունքները: Դաստիարակը իր կիրառած մեթոդիկայով, դիդակտիկ խաղերով սաների մեջ ձևավորում է հետաքրքրություն և դրդապատճառներ մասնակցելու պարապմունքին: Նկատենք նաև, որ պարապմունքի կազմակերպման և անցկացման գործողությունները ապահովում են կապը չափորոշիչի և մյուս բաղադրիչների՝ԽՁ և կերպարվեստային գործողությունների հետ: Պարապմունքը հագեցված է դիդակտիկ նյութերով, ցուցապաստառներով: Ներկայացնենք պարապմունքի թեման, նպատակը, խնդիրները, մեթոդները, դիդակտիկ պարագաները, վերջնարդյունքները և ընթացքը.

Պարապմունք ինտեգրված ԻՇԱ նկարչություն, ապլիկացիա

Խումբ՝ միջին

Պարապմունքի թեման-«Աշուն»

Տևողությունը-2 օր

Նպատակը՝

Կրթական-Ձևավորել երեխաների տարրական գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող սեզոնային երևույթների և ըստ այդմ մարդկանց կյանքում կատարվող

փոփոխությունների մասին, ինչպես նաև զարգացնել նրանց մոտ ընդհանուր պատկերացում տարվա եղանակների, մասնավորապես աշնան բնութագրիչ հատկանիշների վերաբերյալ:

Զարգացնող-զարգացնել երեխաների ուշադրությունը, հիշողությունը, մտածողության բաղադրատարրերը, բացահայտել երեխաների պատկերացումները բնության, հայրենի եզերքի, աշնանային տոների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել երեխաների երկխոսություն վարելու կարողությունը:

Դաստիարակչական-երեխաների մեջ դաստիարակել սեր բնության, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ:

Նոր բառերի ուսուցում-երեխաների ունեցած բառապաշարին ավելացնել նոր բառեր, այդ թվում՝տերևաթափ, ոսկեգույն, գույնզգույն, նախշուն, ամպամած, դեղնահեր, մանուշակագույն, դարչնագույն, բերքահավաք, բերքառատ:

Դիտակտիկ պարագաներ-գունավոր տերևներ, մրգեր, բանջարեղեն, Ա4 ձևաչափի թղթեր, գունավոր մատիտներ, մկրատ, սոսինձ, խորանարդ

Մեթոդներ-զրույց, անհատական խմբերով բացատրական աշխատանք, «խորանարդ», դիդակտիկ խաղեր:

Խնդիրները՝ 1. ձևակերպել հարցադրումներ ուղղված՝ բուսական աշխարհի, տարվա եղանակների, բնության սեզոնային փոփոխությունների մասին ճանաչողական ունակությունների ձևավորմանը, 2. զրույցը տանել բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորման կարողությունների զարգացման ուղղությամբ, դիդակտիկ խաղերը կազմակերպել միտված երեխաների զգայական ընկալման ապահովմանը, 3. Ծեփոը և նկարչությունը կազմակերպել ուղղված երեխաների տեսական գիտելիքների ամրապնդմանը :

Պարապմունքի ընթացքը

Օր-1

Պարապմունքն մեր կողմից անց է կացվել բնության գրկում՝ Գյումրու կենտրոնական զբոսայգում, որի ընթացքում երեխաները զբոսնելով միաժամանակ դիտում էին բնության գեղեցկությունը, աշնան գույները, թափված գույնզգույն տերևները: Դաստիարակի հրահանգով նրանք սկսեցին հավաքել այդ երփներանգ տերևները, որից հետո պատրաստվեցին պարապմունքի անցկացմանը:

Պարապմունքը սկսվեց դաստիարակի կողմից սաներին ուղղված Ղ. Աղայանի աշնան վերաբերյալ հանելուկով.

Դաստիարակ-Երեխաներ ես ձեզ հիմա հանելուկ եմ ասելու և դուք պատասխանելու եք, թե ե՞րբ է լինելու.

Օրն է կարճանում,

Ծառն է մերկանում

Անձրև է մաղում

Այդ ե՞րբ է լինում:

Երեխաներ-Աշնանը

Երեխաների պատասխանները լսելուց հետո դաստիարակի կողմից կատարվեց հարցադրում, պատմել թե ինչ գիտեն աշնան մասին, որին երեխաները պատասխաներցն.

Երեխաներ-Աշնան սկզբում լինում է տաք, արևոտ եղանակ, իսկ հետո օրերը սկսում են ցրտել, երկնքում ամպեր են լինում, անձրևէ գալիս:

Դաստիարակ-Երեխաներ, այսօր մենք այգում գեղեցիկ գույների տերևներ տեսանք և հավաքեցինք: Իսկ դուք գի՞տեք, որ աշունը տարվա ամենաբերքառատ եղանակն է, մրգերը, բանջարեղենը հասունանում են աշնանը, մարդիկ շտապում են հավաքել բերքը, պահածոներ են պատրաստում: Բերքահավաքի ժամանակ մարդիկ օգնում են իրար: Երեխաներ իսկ դուք երբևէ մասնակցել եք բերքահավաքի:

Երեխաներ-Այո մենք տեսել ենք կարտոֆիլի, խնձորի բերքահավաքը

Դաստիարակ-երեխաներեկեք միասին երգենք աշնան մասին Հ. Թումանյանի բառերով «Աշուն» երգը:

Դեղնած դաշտերին իջել է աշուն

Անտառը կրկին ներկել է նախշուն

Պաղ-պաղ մեգի հետ փչում է քամին

Քշում է տանում տերևը դեղին:

Այնուհետև դաստիարակի կողմից կազմակերպվեց դիդակտիկ խաղ **«Քամին և տերևները»** թեմայով, որի հիմնական նպատակը երեխաների մեջ ամրապնդել աշնանային երևույթների՝ քամու, տերևաթափի մասին պատկերացումները: Դաստիարակը համախմբելով երեխաներին իր շուրջը՝ բացատրեց խաղի կանոնները:

Խաղը ունի հետևյալ կանոնները՝ դաստիարակի կողմից հնչող «Քամին փչեց, տերևները պտտվեցին» հրահանգի տակ երեխաները պտտվելու են և ասում ո՛ւ ու՛: «Տերևները թափվեցին» հրահանգի ժամանակ երեխաները կանգ են առնում և կքանստում: «Քամին տերևները տարավ» հրահանգի տակ երեխաները սկսում են վազվզել: «Հավաքեմ տերևները և դրանցից պսակ հյուսեմ» հրահանգի դեպքում երեխաները շրջան են բռնում և երգում աշնանը նվիրված երգ:

Պարապմունքի առաջին օրը ավարտվեց երեխաները ուրախ տրամադրությամբ դուրս եկան այգուց:

Օր 2-րդ

Առավոտյան երեխաները մանկապարտեզ եկան իրենց հետ բերելով նախորդ օրը հավաքած գույնզգույն տերևները, ինչպես նաև մրգեր և բանջարեղեն: Երեխաները զրուցում էին միյանց հետ և կիսվում էքսկուրսիայի ընթացքում իրենց ստացած տպավորություններով: Դաստիարակի կողմից տեղի ունեցավ նրանց զրույցի ուղղորդում հետևյալ հարցերի շրջանակներում.

Դաստիարակ-Երեխաներ մենք երեկ խոսեցինք, աշնան մասին, հիմա տեսնենք, թե ի՞նչ գիտենք աշնան մասին, դրա համար դուք պետք է պատասխանեք հետևյալ հարցերին:

-Որո՞նք են աշնան ամիսները

Երեխաներ-աշնան ամիսներն են՝ սեպտեմբերը, հոկտեմբերը և նոյեմբերը),

Դաստիարակ -Ի՞նչ տոներ ենք նշում աշնանը

Երեխաներ-աշնանը տոնում ենք «Գիտելիքի օրը», «Անկախության օրը», «ՈՒսուցչի օրը», «Բերքի տոնը», «Քաղաքի տոնը»:

Դաստիարակ -Ի՞՞նչ փոփոխություններ են տեղի ունենում կենդանական և բուսական աշխարհում:

Երեխաներ-Աշնանը նապաստակը ձագուկներ է ունենում**,** թիթեռները հարսնյակ են դառնում, բզեզները ձու են աշծում, միջատները մտնում են ծառի ճեղքերը, պատրաստվում են ձմռանը, սկյուռները պաշար են հավաքում ձմռան համար, գորտերը թաքնվում են ջրամբարի հատակում:

Դաստիարակ-երեխաներ, իսկ ի՞նչ է կատարվում թռչունների հետ աշնանը, ո՞ր թռչուններն են չվում տաք երկրներ, որո՞ն ք են ձմեռում մեզ մոտ:

Երեխաներ-Կան թռչուններ, որոնք չվում են տաք երկրներ, դրանցից են՝ ծիծեռնակը, արագիլը, կռունկները, սագերը, սարյակները, իսկ կաչաղակները, ճնճղուկները, ագռավները չեն չվում, այլ մնում են մեզ մոտ:

Դաստիարակ-երեխաներ իսկ հիմա մենք կատարելու ենք աշխատանք աշնան թեմայով, դրա համար ես ձեզ կբաժանեմ թղթեր և դուք ձեր հավաքած տերևներով և գունավոր մատիտներով կպատկերեք աշունը:

Այնուհետև դաստիարակի կողմից սաներին բաժանվեցին Ա4 ձևաչափի թղթեր և տրվեց հանձնարարություն կատարել ծեփի տարրերով նկարչությունև ապլիկացիա: Այդ նպատակով երեխաները բաժանվում են երկու խմբի, որոնցից մի խումբը ծեփի տարրերով կատարում են նկարչությունը, մյուս խումբը ապլիկացիա, գունավոր տերևներով:

Պարապմունքի հաջորդ հատվածում կազմակերպվեց դիդակտիկ խաղեր **«Իմացիր ին՞չ կա պարկում» և «իմացիր ինչ է պատկերված խորանարդի նիստի վրա»** խորագրերով: Երկրորդ խաղի «**Իմացիր ին՞չ կա պարկում»** հիմնական նպատակը երեխաների մեջ ձևավորել ճանաչողական գիտելիքներ բանջարեղենների մասին: Դաստիարակը պարկի մեջ նախապես լցրել էր տարբեր բանջարեղեն՝լոլիկ, սոխ, պղպեղ, գազար: Երեխաները հերթով սկսեցին պարկից հանել բանջարեղենը, անվանել և նշել, թե ինչ գույն ունի այն:

Երրորդ խաղի **«իմացիր ի՞նչ է պատկերված խորանարդի վրա»** ժամանակ դասիարակը նախօրոք ցույց է տալիս, թե ինչ է պատկերված խորանարդի կողմի վրա (մրգեր, բանջարեղեն): Այնուհետև դաստիարակը խորանարդը գլորում է սեղանի վրա, որ պատկերի վրա, որ կանգ է առնում, երեխան նկարագրում է այն ամենը ինչ գիտի այդ պատկերի մասին:

Ամփոփելով նշենք, որ սաների հետ կազմակերպվող ցանկացած էքսկուրսիա, լինի դա թանգարան, գրադարան, դպրոց, այգի, պուրակ, արտադրամաս, նրանց համար համար դառնում է հիշարժան իրադարձություն: Չէ՞ որ այն, սովորական առօրյայի համեմատությամբ բերում է բազմազանություն տալով և գիտելիքներ, և' տպավորություն: Ըստ այդմ մեր խորին համոզմամբ գործունեության այս ձևը չնայած առայժմ չունի մասսայական կիրառելիություն, բայց շատ կարևոր է այն առումով, որ երեխաների մոտ առաջացնում է հետաքրքրություն և ճանաչողական ակտիվություն:

ՈՒստի մենք գտնում ենք, որ սաների ինտեգրված պարապմունքի կազմակերպման այս ձևը ունի առավելություն ավանդական ձևի (խմբասենյակում կազմակերպվող պարապմունքի ձև)նկատմամբ:

Վերջինը կարող ենք հիմնավորել նրանով, որ ինտեգրված պարապմունքը ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական կարողությունների զարգացումը: Դաստիարակի կողմից կատարված հարցադրումների և սաների տված զգացմունքային պատասպխանները գալիս են փաստելու այն իրողությունը, որ նախորդ օրվա զբոսանքը մեծ բավականություն և գեղագիտական հաճույք էր պատճառել նրանց: Ինտեգրված պարապմունքի ընթացքում կիրառված բազմաթիվ մեթոդների շնորհիվ դաստիարակը կարողացավ ապահովել բոլոր երեխաների ներգրավվածությունն ու մասնակցելու ցանկությունը: Նրանք և մենախոսում էին և նաև անհրաժեշտության դեպքում մտնում էին երկխոսության մեջ՝ իրենց խոսքում օգտագործելով ածականներ: Նրանք իրենց բառերով կարողացան մեկնաբանել բնության մեջ կատարվող սեզոնային երևույթները, նաև նշեցին իրենց դբնության պահպանության գործում: Երեխաների ստացած տեսական և զգայական գիտելիքները ամրապնդվեցին նկարչության և ապլիկացիայի միջոցով:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Ճանաչի տարվա եղանակները, տարբերակի նրանցում տեղի ունեցող սեզոնային փոփոխությունները (գարուն, ամառ, աշուն, ձմեռ),
- Ընկալի բնության երևույթների պատճառահետևանքային տարրական կապերը,
- Նկատի բնության գեղեցկությունը,
- Նկարագրի առարկաները, երևույթները, իրադարձությունները,
- Ակտիվ մասնակցի իրեն հետաքրքրող խոսակցությանը,
- Պատկերի առանձին առարկաներ և այդ առարկաների պատկերներին ավելացնելով այլ պատկերներ, ստանա թեմատիկ կոմպոզիցիա:

ԿԱՊԸ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՀԵՏ

Շարժողական ոլորտ – Խաղում է շարժախաղեր հիմնական շարժողական գործողություններով:

Խոսքի և հաղորդակցման ոլորտ – նկարագրում է առարկաները, երևույթները, դրանց միջև եղած պարզագույն կապերը: Հաղորդակցման ընթացքում ոչ միայն արտահայտում է սեփական վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, այլև դրսևորում է դիմացինին լսելու կարողություն:

Իմացական ոլորտ – մասնակցում է համատեղ կազմակերպվող աշխատանքներին և ավարտին հասցնում առաջադրանքը: Հասկանում է շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականութունը, փոխկապակցվածությունը, ունի տարրական պատկերացումներ կենդանական աշխարհի և անկենդան բնության մասին, կարևորում է մարդու աշխատանքը և դրա արդյունքները:

Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ – Խմբային աշխատանքներում և խաղերում դրսևորում է համատեղ գործելու պատրաստակամություն, համագործակցելու ցանկություն, ակտիվ մասնակցում է մեծահասակների և հասակակիցների նախաձեռնություններին:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Դիտարկվեց ինտեգրված պարապմունք ՀՇԱ-ից «Աշուն» թեմայով։

Պարապմունքը պլանավորված է, ձևավորված են պարապմունքի թեման, նպատակը, քայլերը և վերջնարդյունքը։ Քայլերը բխում են սահմանված նպատակից և փոխկապակցված են։ Դաստիարակը իր կիրառած մեթոդիկայով, կազմակերպած դիդակտիկ խաղերով մոտիվացիա է ստեղծում սաների մեջ, խթանում նրանց հետաքրքրությունը։ Կապը չափորոշչի և մյուս բաղադրիչների՝ ԽՁ և կերպարվեստային գործողությունների հետ ապահովված է։ Պարապմունքը հագեցած է դիդակտիկ նյութերով, նկարներով և պաստառներով։ Դաստիարակը հարգանքով է վերաբերվում յուրաքանչյուր երեխայի։ Ցուցաբերում է անհատական մոտեցում։ Դաստիարակը խոսում է պարզ, գրագետ, ունի խոսքի չափավոր տեմպ և գեղեցիկ ձայնային տոնայնություն։ Խմբասենյակի ջերմ, անկաշկանդ և անմիջական մթնոլորտն ապահովված է։ Պահպանվեց պարապմունքի կառուցվածքը և տևողությունը։ Խմբասենյակի աշխատանքային կենտրոնները հագեցված են։ Սաները ցուցաբերում են ակտիվ մասնակցություն, նրանց մոտ զարգացած է խոսքի հնչյունային կուլտուրան, կապակցված խոսքը, բառապաշարը և երկխոսության մեջ մտնելու կարողությունը։ Դաստիարակը իր աշխատանքը անցկացրեց ԽԻԿ համակարգով։ Կշռադատման փուլը ամփոփեց կերպարվեստային գործունեությամբ, որի արդյունքում պարզ դարձավ, որ երեխաների մոտ զարգացած է ստեղծագործական միտքը, գունազգացողությունը։ Ձևավորված է կերպարվեստի հանդեպ երեխաների հետաքրքրությունը։ Դաստիարակի կողմից ճիշտ սահմանված քայլերը բերեցին վերջնարդյունքին։

Մեթոդիստ՝ Շ. Իկիլիկյան

Դիտեցի «Աշուն» թեմայով ինտեգրված պարապմունք միջին տարիքային խմբում։

Դաստիարակը հարց ու պատասխանի միջոցով վեր հանեց երեխաների ունեցած գիտելիքներն ու պատկերացումները աշնան մասին։ Երեխաները կարողացան կապ տանել բնության երևույթների և մարդու միջև՝ կարևորելով բնության դերը մարդու կյանքում։

Քանի որ ինտեգրված պարապմունքն ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական կարողությունների զարգացմանն ու ձևավորմանը, ուստի դաստիարակի հարցադրումներից և սաների զգացմունքայինպատասխաններից պարզ դարձավ, որ նախորդ օրվա զբոսանքը մեծ բավականություն և գեղագիտական հաճույք էր պարգևել նրանց:

Ինտեգրված պարապմունքների ընթացքում օգտագործված բազմազան մեթոդների շնորհիվ դաստիարակը կարողացավ ապահովել բոլոր երեխաների ներգրավվածությունն ու մասնակցելու ցանկությունը: Նրանք և՛ մենախոսում էին, և՛ անհրաժեշտության դեպքում մտնում էին երկխոսության մեջ՝ օգտագործելով խոսքում ածականներ, քերականորեն ճիշտ կառուցում խոսքը:

Հետազոտվող թեման կարևոր էր այնքանով, որ երեխաները կարողացան տեսնել բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և դրանց դերն իրենց կյանքում, ինչպես նաև՝ իրենց դերն ու նշանակությունը բնության պահպանման գործում:

Երեխաներն իրենց ստացած գիտելիքներն ամրապնդեցին նկարչության և ապլիկացիայի միջոցով, որոնք ավելի պատկերավոր դարձրեցին մատուցված նյութի բովանդակությունը:

Դաստիարակ՝ Ժ. Խաչատրյան

Դիտարկումն անցկացվել է միջին «ա» խմբում: Պարապմունքը ինտեգրված էր, թեման՝ «Աշուն»: Պարապմունքը պլանավորված էր, հստակ ձևակերպված էր թեման, նպատակը: Դաստիարակը իր առջև դրված խնդիրների լուծմամբ հասավ նպատակին և ապահովեց վերջնարդյունքը: Առկա էին պարապմունքի համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաները, սարքավորումները՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար: Պահպանված էր կապը չափորոշչի հետ, ապահովված էր միջբաղադրիչային կապը՝ ԽՁ,ԿԿԱ:

Դաստիարակը խոսում էր պարզ, հասկանալի ու գրագետ: Խմբասենյակում տիրում էր դրական, ջերմ և համագործակցային մթնոլորտ: Երեխաները ակտիվ էին, անկաշկանդ: Դաստիարակը հարգալից էր յուրաքանչյուր երեխայի նկատմամբ, արձագանքում էր նրանց կարիքներին, ցուցաբերում էր անհատական մոտեցում: Դաստիարակը

ապահովում էր բոլոր սաների ներգրավվածությունը։ Պարապմունքի ընթացքում դաստիարակը կիրառեց զանազան մեթոդներ, հնարներ, խաղեր՝ նպատակին հասնելու համար։ Նման մոտեցումը օգնեց դաստիարակին զարգացնել երկխոսելու և մենախոսելու, հարցեր ուղղելու, սոցիալականացվելու, գեղեցիկը նկատելու և գնահատելու, աշխատանքը ավարտին հասցնելու կարողությունները։ Պարապմունքի նպատակին հասնելու և վերջնարդյունք ապահովելու համար մեծ դեր ունեցավ երեխաների զբոսանքը, բնության հետ անմիջական շփումը, սեփական զգացողություններն ու փորձը։

Հետազոտական աշխատանքի ընտրությունը շատ գովելի է, քանզի դեռ նախադպրոցական տարիքից պետք է սկսել երեխայի մեջ սերմանել սեր դեպի հայրենիք, բնություն, մշակույթ։ Երեխան դեռ մանկուց պետք է հասկանա բնության և մարդու սերտ կապը, արժևորի գեղեցիկը, բարին և պահպանի շրջակա միջավայրը։

Տնօրեն՝ Ա. Մնացյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական ուսումնական հաստատությունում էքսկուրսիաները և մշակութային այցերը մանկավարժական գործընթացի կարևոր մասն են: Դրանք այցելություն են դեպի բնության գիրկ, տեսարժան վայրերը, զրադարաններ, թանգարաններ, արտադրամասեր, դարացներ և այլն ուսումնադաստիարակչական նպատակներով, որոնք հնարավորություն են ընձեռում ստանալ մեծաքանակ տեղեկատվություն, և հատկանշականն այն է, որ այս պարագայում ստացվող տեղեկությունը լինում է առավել տպավորիչ, հուզական, մնայուն, որովհետև փոխանցումն իրականացվում է անմիջական շփման, հաղորդակցման և զգայական փորձի օգնությամբ: Գործունեության այս ձևերի ժամանակ մեծ բավականություն են ստանում թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Սաների համար նա ոչ միայն հետաքրքիր ժամանակ է, այլ նաև ուսումնադաստիարակչական գործունեություն, որի արդյունքում զարգանում է նրանց մտածողությանը, ձևավորում է հուզական ոլորտը, դաստիարակվում վարքի դրսևորման ձևերը, ինչպես նաև մարզվում է ֆիզիկական տոկունությունը: Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում են էսթետիկ զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակվում սեր բնության, հայրենիքի նկատմամբ: Երեխաների մոտ նաև առաջանում է բնությունը գնահատելու և պաշտպանելու ցանկություն, ընդլայնվում է նրանց մտահորիզոնը, ձևավորվում աշխարհայացքը, զարգանում են հաղորդակցման հմտությունները, զգայական փորձը նկարագրելու կարողությունը, հարստանում է բառապաշարը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանդրյան Է.Ա.Այվազյան Լ.Մ. Խաչատրյան Հ.Վ. և ուրիշներՆախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, «Մանկավարժ» հրատ. Երևան-1992թ., էջ271
2. Ամիրջանյան Յու., «Մանկավարժություն», Երևան, 2005, էջ 348:
3. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան2014թ.
4. Տեր-Գրիգորյան Ա. ,Գործնականաշխատանքները բացատրական ընթերցանության դասերին, Երևան , 1963:
5. Ушинский-«Собрание сочинений»(1948г. Стр.333)